

գմբէթաւոր. իր ճարտարապետական ձեւը հիացում կ'առթէ բոլոր այցելուաց, մանաւանդ իր դահլիճը՝ որ այժմ ելեքտրակաշնութեամբ ալ կը լուսաւորուի, շէնքին ամենէն չքնաղ ու աչաց հաճոյ մասը կը կազմէ, և արժանի է կոչել զայն Վեհարան: Անոր երկայնութիւնը 21 մէթր է և լայնութիւնը 7, 5 մէթր. 158 քառակուսի մէթր տարածութիւնը ունի. բարձր կամարակապ և գմբէթայարկ է, յատակը մարմարեայ սալարկուած, պատերը վայելուչ գծագրուած: Յովհաննէս պատրիարք այս Պատրիարքարանին շինութեամբ ենթարկուած է մեծ ծախսերու և մեծ ճիգերու: Դահլիճին երկու կողմերը կը գտնուին պատրիարքին բնակութեան յատկացեալ սենեակները. հարաւային կողմը, զատ դուռով կը մտցուի յարկաբաժին մը, որուն մէջ կը գտնուի ճաշասենեակը իր մասերով. գետնայարկին մէջ են բազմիքը, խոհանոցը և սենեակներ: Դահլիճը զարդարուած է գորգերով և կը զործածուի պաշտօնական անձանց իբր ընդունելութեան սրահ, և միանգամայն իբր միաբանական ժողովներու և ընդհանուր համախմբութիւններու պաշտօնատեղի: Դահլիճին մէջ կը գտնուի նաև երեք ապակափեղկ դարաններ՝ որ կը պարունակեն յախճապակեայ արուեստակերտ և հնօրեայ նմոյշներ: Պատերը զարդարուած են կենդանադիրերով և նկարներով, որոնք մեծաւ մասամբ յիշատակի նուէրներ են, որոնց զխաւորները կը յիշենք, ինչպէս Աւստրիոյ Ֆրանց ժօզէֆ Կայսեր և Կայսրուհւոյն պատկերները անձամբ այցելութենէն տարի մը յոռաջ ղրկուած: Գերմանիոյ Վիլհելմ Ա. Կայսեր և Կայսրուհւոյն կենդանագիրը, արքայազուններու այցելութեան առթիւ նուիրուած. վերջնոյս ժառանգներուն՝ Ֆրէտէրիք և Վիլհելմ կայսրներու պատկերներն ալ իրենց ստորագրութեամբ յիշատակ թողուած են: Ռուսիոյ Աղեքսանդր Գ. Կայսեր և Կայսրուհւոյն պատկերները նմանապէս արքայազուններու այցելութեան առթիւ տրուած են:

Ս. Աթոռոյս Պատրիարքարանի դահլիճին մէջ, ի շարս թագաւոր և թագուհիներու պատկերներուն, կը գտնուին Մեծն-Բրիտանիոյ Վիքթորիա Թագուհին, Բրէնս Ալպէրթին և այն ատենուան գահաժառանգ Եղուարդ Է. Թագաւորին ինքնաստորագիր պատկերները: Ասոնք, 1869ին Վիքթորիա Թագուհին կողմէ նուիրուած են Տ. Նսայի Ս. Պատրիարքին հետեւեալ պարագաներու տակ: